

# ԻՐԱՎԱԳԱՆ մշակույթ

Չկա Հասարակության  
անանց իրավունքի  
Ubi societas ibi jus

Ե Ր Կ Ղ Վ Ք Ր Ք Ք Ք Ք  
թիվ 9 (29)  
2008 թ. մայիսի 31

## ՆԱԳԱՆՁ... ԴԱՐՁՅԱԼ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

Մշակութային տոնացույցով հանդիսավորապես ազդարարված, պաշտոնական փաստաթղթերում ամրագրված որոշակի արժանահիշատակ օրեր կան՝ Մայրենի լեզվի (փետրվարի 21), Գրքի և հեղինակային իրավունքի (ապրիլի 23), Գրագիտության (սեպտեմբերի 8) և այլն: Իսկ 2003-2012 թթ. ընկած ժամանակահատվածը հայտարարված է ՄԱԿ-ի գրագիտության տասնամյակ:

Արժանահիշատակ օրերը որոշված են, կազմվում են ամենամյա զեկույցներ, մշակվում հեռանկարային կառուցողական ծրագրեր, մինչդեռ մշակութային զարգացման, վերելքի ակնկալիքներին ընդառաջ՝ Գայաստանում ակներև է... Ես համըջ:

Այս ցանկացից, իհարկե, չի կարելի եզրակացնել, թե հայ ազգն այլևս տաղանդեղ չի ծնում, կամ կարծել, թե մենք ցավալիորեն կորցնում ենք մեր մշակութային ինքնությունը: Սակայն անկասկած է, որ եթե այսօր վճռական քայլեր չձեռնարկվեն, ապա վիճակին անխուսափելիորեն կհետևի ազգային յուրակերտ դիմագծերի զուցե և անդառնալի կորուստը:

Դազարամյակների հարուստ մշակույթի կորը է հայ ժողովուրդը, ով պատմության վտանգաշատ կեանքներում հավատել է իր գոյության, արարելու և հարատևելու աստվածատուր իրավունքը: Զարմանալի ու նաև բնական է, որ սեփական հոգևոր արժեքների, նախնիներից ժառանգված արժևոր շտեմարանների ու բզկտված պատահիլների նկատմամբ գորովն ու գնահատանքն ավելացել, բազմապատկվել են պատմաբանաբանական հենց այն ժամանակահատվածներում, երբ դամոկլյան սրի պես ազգի գլխավերևում ծոծվել է լինել-չլինելու հարցը: Այդպիսի պատմաբաններն էլ հենց մշակվողվել են արվեստի տարբեր ճյուղերի ամենախաղաղ վերելքով, մշակութային վերագարծնքով:

Մերօրյա իրականությունն, անշուշտ, այլ է:

Ամցյալի և ապագայի սահմանագծին երբ էլ հետադարձ հայացքով անդրադառնում ենք վերջին տասնամյակների ընթացքում կրթամշակութային ոլորտում գոյություն ունեցող իրողություններին, հանգում ենք մի ցավալի եզրակացության՝ ճշմարտության պես հավաստի ու անհերքելի կարևոր մի զեղարարձի պահին զարգացման բնական ընթացքը շեղվել է գոյացել է անթուր, անթաքույց մի անդունդ: Գիրքն ու զեղարվեստի ընկալումը անճեղելիորեն հեռացել ու շարունակում են հեռանալ մեզմից: Այդ «շեղումը» հետևանքը սեփական վերքի պես ցավոտ ու հարազատ է: Գարցն այն է, որ շեղման քայլն սկսում է արմատավորվել հասարակական գիտակցության մեջ, դառնալ ստանդոլային ձև: Չակվորով նոր սե-

րունդը հաճախ ունակ չէ տարբերելու բարձրարվեստ, մեծարժեք գործն անարվեստ, անգամ անարհեստ, բայց արժևորի թողի մերքո իրամցվող «արվեստի գործերից», մատուցումներից:

Եթե ժամանակակից երիտասարդի, պատանու, նույնիսկ մանկան կենսական, խոսքային և արդեն լեզվամտածական միջավայրում բազմիցս կրկնվում և դրա հետևանքով անխուսափելիորեն ընդունելի են դառնում, խրախուսվում առօրյա գոեհիկ խոսքը, ընդամենը ռիթմախոսող-հարվածային «իմաստազերծված» երգն ու երաժշտությունը (նկարչության, քանդակագործության և այլ արվեստների վերաբերյալ խոսելն էլ ավելորդ է, քանզի դրանց մասին պատկերացում իսկ չունեն), ապա բնական, անխուսափելի է, որ յուրաքանչյուր հաջորդ սերնդի հետ կորցնում ու կորցնելու ենք ավելին:

Խնդիրն արժարծվում է ոչ առաջին, ոչ էլ, ցավոք, վերջին անգամ, քանզի առկա է «հակամշակույթ, հակարվեստ» համաճարակաբնույթ ախտը, որի ապաքինման գործին պետք է լծվի յուրաքանչյուր ոք: Իրականում այս ուղղությամբ ի՞նչ միջոցներ, քայլեր ենք ձեռնարկում մենք և առաջին հերթին երկրի իշխանությունները, պատկան մարմինները՝ իրավիճակը, ճգնաժամը հաղթահարելու նպատակով:

Այսօր ավստանքով ու հաճախ տհաճությամբ ենք ունկնդրում որոշ պետական այրերի անպարկեշտ արտահայտությունները, մայրենիին անեճեճի չառնչվող ելույթները, քաղաքացիների առունձի բարբառաբանությունը, երիտասարդների ու պատանիների ինքնաբավ ժարգոնախոսությունը:

Գայերս այսպիսի ժողովուրդ ենք: Մի կողմից՝ Գր. Նարեկացու ու Գ. Թումանյանի, Կոմիտասի ու Ջիվանու, Մ. Սարյանի ու Մ. Ավետիսյանի, Ս. Փարազանովի և Ա. Խաչատրյանի՝ մեզ փոխանցած ծանրակշիռ ժառանգությունը չենք կարողանում արժանավայել արժևորել, ներկայացնել համաշխարհային մշակութային ասպարեզում, մյուս կողմից՝ նախասիրություն ենք ցուցաբերում ամբարտավանորեն մեծախոսել այնպիսի երևույթների մասին, որոնք բացակայում են հենց մեզանում: Ավամա է, սակայն, հարցադրումը՝ մինչև է՞րբ:

Տագնապի ծայր բարձրացնելու մեջ նպատակը մեկն է՝ շտկել վիճակը:

Կոչ ենք իրենք իրենց անուններով: Գրքի է բացահայտ արտադրող մեր հոգևոր ակնհայտ տկարությունը, այնուհետև կվերագոտենք մեր ազգային տոհմիկ մտածողությունը՝ վերահաստատելով հոգևոր-մշակութային նվիրական ժառանգորդության անընդհատությունը...

ՀԵՐՄԻՆԵ ԲԱԲՈՒՅԱՆ

## ԶԱՅՆ ՄԵԾԱՑ

Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտովթյամբ և անգիտովթյամբ, մեղա՛, մեղա՛՛ կրարատին:



Ծահան Ծահուր

«Կնահանջը առանց երգի» վեպից

## Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

- Իրավունք և մարդու իրավունքներն աշխարհում \_\_\_\_\_ էջ 2
- Եվրոպական միության հայտարարությունը ԳԳ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցի վերաբերյալ \_\_\_\_\_ էջ 2
- Վանաձորը կդառնա Մարդու իրավունքների կրթության միջազգային կենտրոն \_\_\_\_\_ էջ 3
- Առօրյա կիրառելի օրենքներ \_\_\_\_\_ էջ 4
- Մեծագույն դասի ազգային մրցանիչը՝ 8277 մարդ \_\_\_\_\_ էջ 5
- Լևոն Սարգսյան. «Ինքնամերկացում» \_\_\_\_\_ էջ 6
- Դավիթ Գյուլզարյան. «Մեռագար նկրտումներ» \_\_\_\_\_ էջ 6
- Մամե Դավթյան. «Ո՞րն է հանդուրժողականության սահմանը» \_\_\_\_\_ էջ 6
- Սուրբ Մինասի, Երմոզիների և Գրաբոս դպիրի վկայաբանությունը \_\_\_\_\_ էջ 7
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8



# ՎԱՆԱՁՈՐԸ ԿԴԱՌՆԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



Լուու մարզպետ Արամ Քոչարյան

2008 թ. մայիսի 17-ին Վանաձորի Ըառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում Լուու մարզպետարանի և Վանաձորի քաղաքապետարանի համագործակցությամբ, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ժամը 11.00-21.00-ը տեղի ունեցավ մարզային դրամահավաք-հեռուստամարաթոն, որին մասնակցեցին շուրջ 500 կազմակերպություններ և անհատներ՝ իրենց բաժին քարը դնելով Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին: Դրամահավաքի սկզբում՝ ժամը 11.00-ին, իր օրհնության խոսքը բերեց Մք. Աստվածածին եկեղեցու ավագ քահանա Տեր

Իրենց օրհնության խոսքում նրանք նշեցին, որ իրականացման փուլում է գտնվում մի շատ գեղեցիկ ծրագիր՝ ի բարորություն Լուու մարզի և ամբողջ Հայաստանի ժողովրդի: Հոգևոր հայրերը շեշտեցին, որ հիմքեր են դրվում այնպիսի մի շինության, որը կդառնա հիրավի Մարդու իրավունքների, իրավունքի մասնագետների վերապատրաստման տարածաշրջանային կրթական հաստատություն: Նրանք կոչ արեցին յուրաքանչյուրին աջակցել այս աստվածահաճո գործին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նա-



Լևոն Մկրտչյան

խորեին Վանաձոր այցելած ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ով, ողջունելով թե՛ ՀՄԿ կազմակերպության գործունեությունը, թե՛ ՄԻՉԴ շենքի կառուցման գաղափարը, ասաց. «Իսկապես խիստ կարևոր է, որ մենք կրթության մեջ հասկանանք և կարևորենք Մարդու իրավունքների համապարփակ դասավանդումը: Ավելին, վերջերս պաշտոնական այցի ժամանակ Ստրասբուրգում մենք հանդես եկանք երևանյան նախաձեռնությամբ, որը երկի կդառնա շատ ավելի պաշտոնական, որպեսզի ունենաք հատուկ ծրագրերի մաս՝ կրթության մեջ մարդու իրավունքների բլոկ՝ իր ծանրա-



Օհան քահանա Լուսարայանը: Մինչ դրամահավաքի պաշտոնական մեկնարկն արդեն իսկ Մարդու իրավունքների հայկական դպրոցի պատին իր բաժին քարը դրեց ճարտարապետ Նվեր Օհանյանը, իսկ պաշտոնական մեկնարկից հետո գրանցված առաջին նվիրատուն դարձավ Լուու մարզային գրադարանի փոխտնօրեն Ֆրոնյա Ջանջուղազյանը: Նրանց հանձնելիս հատուկ նախատեսված նվերներ:

Դրամահավաքին ակտիվորեն մասնակցեցին և իրենց ներդրումը կատարեցին Լուու մարզի և հատկապես Վանաձորի բնակիչները, Լուու մարզպետարանը, Վանաձորի քաղաքապետարանը, բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկություններ, կրթամշակութային օջախներ, տասնյակ երեխաներ: Մասնակցության աշխարհագրությունը, ինչը սպասելի էր, դուրս ելավ Լուու մարզի սահմաններից: Դրամահավաքին իրենց մասնակցությունը բերեցին նաև առանձին անհատներ Երևանից, Կապանից, Սևանից, Մուկվայից, Գեղեղեղից:

16.00-ին մեկնարկեց հեռուստամարաթոնը Լուու, Միզ, Վարս հեռուստաալիքներով և ռադիոալիքներով միաժամանակ: Հեռուստամարաթոնն իրենց օրհնության խոսքով սկսեցին Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդարհատ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Վահան քահանա Ազարյանը (Միզ և Վարս հեռուստաալիքներով) և Տեր Ստեփանոս քահանա Մարգարյանը (Լուու հեռուստաալիքով):



Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյան

տարածքում նման ուսուցողական կենտրոն չկա, և այն, որ նախաձեռնությունը ոչ թե երևանյան, այլ մարզային կազմակերպությունից է, խրախուսելի է: ՄԱԿ-ի համար ևս այն խրախուսելի ծրագիր է, քանի որ ՄԱԿ-ը վարում է ապակենտրոնացման քաղաքականություն, այսինքն՝ մարզերում ևս նման ծրագրերի զարգացմանը նպաստել:

ՀՀ ԿԳՆ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Մանուկ Մկրտչյանն իր կոչ-խոսքում մասնավորապես նշեց. «Ես շատ վաղուց համագործակցում եմ ՀՄԿ-ի հետ: Եթե անկեղծ ասեն, մեծ հույսեր են կապում կենտրոնի հետ, ինձ սրտամոտ են տա-



Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյան

րածաշրջանային կենտրոն դառնալու նրանց մտադրությունները, բայց կարևոր ոչ թե այն է, որ դրանք մտադրություններ են, այլ կարողություններ, որոնք, կարող են հավաստիացնել, առկա են: Այսօրվա դրությամբ՝ ՀՄԿ-ը բավականին լուրջ նվաճումներ ունի, որը հիմք է տալիս մտածելու, որ այդ մտադրությունները կիրականանան:

ՀՄԿ-ն առանձնանում է մեր մյուս կենտրոններից, որոնք զբաղվում են ուսուցչական կադրերի վերապատրաստման խնդիրներով:

Առաջին առանձնահատկությունը բովանդակությունն է՝ Մարդու իրավունքների, ժողովրդավարության սկզբունքներ, ժողովրդավարության սկզբունքներ, ժողովրդավարության սկզբունքներ, ժողովրդավարության սկզբունքներ, ժողովրդավարության սկզբունքներ:



ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության ներկայացուցչի պաշտոնակատար Արմինե Հայաջյանի ուղերձում շեշտված էր այն միտքը, որ մտահղացումը յուրահատուկ է, և ոչ միայն տարածաշրջանում, այլև ԱՊՀ

ՀՄԿ-ն զբաղվում է: Մյուս կողմից հարցն այն է, թե այդ խնդիրն ինչպես են լուծում: Դրանք ուսուցիչների համար դասապրոցեսի կազմակերպման նոր մեթոդիկաներ են, որոնք արմատապես տարբերվում են մինչև այժմ ընդունված մեթոդներից, տեխնոլոգիաներից:

Ամենակարևոր հանգամանքներից մեկն արժեքային համակարգն է: ՀՄԿ-ի աշխատակիցներն ու ընդհանրապես գործունեությունը միշտ հենվում է մեր ազգի քրիստոնեական արժեքների հիման վրա կառուցված հա-



Ներսես Հայրապետյան

սարակական կյանքի կազմակերպման արժեքավերաբերող վրա:

Որտեղ էլ լինեք ՀՄԿ-ը՝ Երևանում, Գորիսում, Վանաձորում թե այլուր, այն արդեն անգնահատելի է: Իհարկե, ես ողջունում եմ, որ այն երևանում չէ, որ մարզերում և ունենանք լուրջ կենտրոններ, ոչ թե միայն մասնաճյուղեր: Այն, որ Վանաձորը կկայանա որպես տարածաշրջանային կենտրոն, ուրախալի ու պատվաբեր է:

Ուսուս յուրաքանչյուր հայ մարդ պետք է հասկանա, որ այն իրեն է պետք և հնարավորինս նպաստի ծրագրին»:



Արմինե Հայաջյան

«Ես տեսնում եմ, որ իրենք մոտեցել են նաև իրենց երազանքի իրագործմանը, ուզում են կառուցել այն դպրոցը, որի պատկերն արդեն մի քանի տարի ցուցաբերելու տեսել են և ասում են, որ անպայման հաջողվելու է, պարզապես պետք է վստահել, աջակցել»,- նշեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ռեսուրս կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանը:

Մարզային երեք հեռուստաալիքներով եթեր հեռարձակվող դրամահավաք-մարաթոնին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու կոչով հանդես եկան մարզի և հատկապես Վանաձոր քաղաքի իշխանության շատ ներկայացուցիչներ, արվեստագետներ, որոնցից յուրաքանչյուրը մեծապես կարևորեց Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի կառուցման ծրագիրը: → էջ 4



# ՎԱՆԱԶՈՐԸ ԿԴԱՌՆԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

էջ 4

Լոռու մարզպետ, Մարդու իրավունքների խորհրդի նախագահ Արամ Քոչարյանը հարցազրույցի ժամանակ նշեց, որ Դայակա- կան սահմանադրական իրավապաշտպան կենտրոնն այս տարիների ընթացքում լուրջ դեր է ունեցել Մարդու իրավունքների դատաբանության կազմակերպման և այդ խնդիրների վերաբերյալ բազմաթիվ միջոցառումների առումով: «Կենտրոնն ունենալու է տարածաշրջանային նշանակություն,

հասարակությունում: Ես հավատացած եմ, որ մոտ ապագայում ծրագրին իրականու- թյուն կդրանա, և մենք բոլորս դրա ակնա- տեսը կդառնանք, որովհետև ՄԻՅԻ-ի ստեղծումը կարևորագույն քայլ է»:

Վանածորի պետական մանկավարժա- կան ինստիտուտի գրականության ամբիո- նի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթրյանն իր կոչ-ուղերով, մեծապես կարևորելով ՄԻՅԻ շենքի կառուցումը՝ որպես տարա- ծաշրջանային ուսուցողական կենտրոն, նշեց. «Ճիշտ ազատության համար մարդը պիտի զինված լինի գիտելիքով. եթե մար- դը գիտելիք չունի, նա ազատ չի կարող լի- նել: Մարդկանց ազատ լինելու հնարա- վորություն է տրված, բայց նրանք չեն կարողանում դրանից օգտվել, որովհետև ազատ ճախրելու համար ինքնզոյանքի քեր են պետք: Ուրախ եմ, որ Վանածորում ստեղծվել է այդ կենտրոնը. ստեղծվում է մարդկանց լոյս տանելու կենտրոն, և պի- տի բոլորս մասնակցենք»:

Դրամահավաք-մարտերին ակտիվորեն մասնակցելու կոչով հանդես եկան Վանա- ձորի պատվավոր քաղաքացի Դայկ Օհան- յանը, ՎՊՄԻ դասախոս Արման Բեռնեցյա- նը, ՄԻՅԻ ուսուցանող Աննիտա Սահակյա- նը, «Լուսաստղ» ԴԿ նախագահ, «Պրոֆե- սիոնալներ հանուն քաղաքացիական հա- սարակության» ԴԿ ծրագրերի ղեկավար Լուկա Պապանյանը, բանաստեղծ Բազմիկ Պողոսյանը, դերասանուհի Արմինե Սա-

ցակյանը, ԴԿ վաստակավոր արտիստուհի Ողգա Մխիթարյանը, ՎՊՄԻ ընդհանուր աշ- խատանքների գծով պրոնեկտոր, փիլիսո- փայական գիտությունների բեկնածու Գա- զիկ Եթիմյանը, Ստ. Ջորյանի տուն-բանա- ճարի տնօրեն, բանաստեղծուհի Լեւոն Ան- քառայանը, «Լոռու մարզ» թերթի գլխա- վոր խմբագիր, բանաստեղծ Մանվել Միկո- յանը, Վանածորի քաղաքապետարանի կր- թության, մշակույթի և սպորտի բաժնի պետ Գազիկ Աղաբաբյանը, Փամբակ համայնքի



Վանածորիցները նվիրաբերում են իրենց բաժին քարը

ճարհագրի Սամսոն Ուկիսանյանը, ՄԻՅԻ ուսուցանող Արմինե Իվանյանը, «Ֆրենկ» ընկերության տնօրեն Միսրոն Մակարյա- նը, Արմեն Դակոբյանը, դուդուկահար Դո- վիկ Վարդումյանը և ուրիշներ:

Ընդհանուր առմամբ դրամահավաք-հե- տուստամարտերի արդյունքում նվիրաբե- րվել է 1.616.550 դրամ կամ 6466 քար, և կա- տարվել են փոխանցումների խոստումներ՝ 630.500 դրամի չափով (2522 քար): Խոստաց- ված գումարների ստացումից հետո գումարը կկազմի 2.247.050 դրամ (8988 քար):



Վել է՝ 1.616.550 դրամ կամ 6466 քար, և կա- տարվել են փոխանցումների խոստումներ՝ 630.500 դրամի չափով (2522 քար): Խոստաց- ված գումարների ստացումից հետո գումարը կկազմի 2.247.050 դրամ (8988 քար):

Դրամահավաքը շարունակվում է: Ցանկա- ցողները կարող են իրենց բաժին քարը դնել Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի պատին՝ Մայրատառնում ու տարա- ծաշրջանում Մարդու իրավունքների կրթու- թյան զարգացմանը նպաստելու համար:

Փոխանցումները կարելի է կատարել հետևյալ բանկերի հաշվառմամբ. 001-093392-001 (հայկական դրամ) բանկ՝ Էյ-Ես-Բի-Սի (HSBC) բանկ – Դա- յաստան ստացող՝ Դայակաճար սահմանադրական իրավապաշտպան կենտրոն (ԴՄԻԿ) նպատակ՝ «ՄԻՅԻ շենքի համայնք»:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 22967 կամ 44781 հեռախոսահա- մարներով:



Աշխատանքային պահին


ես դա կարևորում եմ», - եզրափակեց մարզպետը:

Վանածորի քաղաքապետարանի քար- տուղար Գազիկ Սիմոնյանը մասնավորա- պես նշեց. «Ինձ համար հետաքրքիր է, թե որքան մարդ կմասնակցի, այսինքն՝ թե բնակչության որ մասն է ցանկանում ապ- ընել իրավական երկրում, քաղաքացիական

## ԱՌՈՐԹԱՆ ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

«Իրավական մշակույթ»-ի խմբագրությունը շարունակում է տպագրել Հայաստանի Հանրապետության օրենսդրության առավել գործածական օրենքներից հատվածներ: Նկատի ունենալով, որ առաջիկայում հունիս ամսին, Նախատեսված է հերթական գորահավաքը, ձեր ուշադրության ենք ներկայացնում Զինապարտության մասին ԳՅ օրենքից հասարակությանը հուզող հարցերի վերաբերյալ որոշ հոդվածներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Ընդունված է Ազգային ժողովի կողմից 1998 թ. սեպտեմբերի 16

7. Գործարարի զինվորական ծառայության զրկումից ազատվելը  
1. Գործարարի զինվորական ծառայությունից ազատվում է՝  
ա) համրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշ- Վառումից:  
բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հա- րազատ եղբայրը (ըսույրը) զոհվել (մահացել) է ԳՅ պաշտպանության կամ զինված ուժերում է այլ զորքերում ծառայողական պարտավորու- թյունների կատարելու ժամանակ, և նա այդ ըն- տանիքի միակ արու զավակն է:  
գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ:  
դ) զինվորական աստիճան ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտա- կան կամ մանկավարժական գործունեությամբ: Գործարարի զինվորական ծառայության մասին ԳՅ օրենքից հետո ծառայության քերում տարիներում ստանալը  
1. Գործարարի զինվորական ծառայության զր- ակոչից ընտանեկան դրության բերումով տար- րելուում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝ ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ մանուկներով հայր կամ մայր, եթե նրանք չունեն ԳՅ քաղաքացի համարվող աշխատու- ռեն, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:  
բ) առանց մոր մեծացող երեխա,  
գ) երկու և ավելի երեխա,  
դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին,  
ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից քարծր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշ- մանդամ կամ դատարանի վճռով անգործական ճանաչված հարազատ բույր կամ եղբայր, եթե նրա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ հա- մարվող աշխատունակ այլ անձ:  
2. Զորակոչիկին տարիներում տրվում է նաև վերջի- ճիս կմը՝ 2-րդ երեխայով կամ զուգ երեխայով վեցամսյա իրիության դեպքում:

2. Եթե քաղաքացին մինչև զո- րակոչային տարիքի հասնելը առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծ- վել են առնվազն 5 տարի առաջ, և կա սույն հոդ- վածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զրկակոչից տարիներում ստա- նուլ իրավունքից:  
3. Գործարարի զինվորական ծառայու- թյան զրկակոչից ուսումը շարունակելու համար տարիներում ստանալը  
1. Գործարարի զինվորական ծառայության զր- ակոչից ուսումը շարունակելու համար տարիե- տան տրվում է՝  
ա) պետական բուհերի (այդ թվում՝ օրդինատու- րա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերե- կային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև ԳՅ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ու- սումանոցիկ հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին:  
բ) պետական գիտակրթական համակարգի ա- սպիտանոցայում պետական պատվերով աշկա- րա ուսուցմանը տվողներին,  
գ) պետական պատվերով, միջպետական և միջ- գերտեսչական համամայնագրերով օտա- րերկրյա պետությունների քարծրագույն ուսու- ճական հաստատությունների ուսանողներին, օրիցինատուրայում, ինտերնատուրայում, մա- գիստրատուրայում կամ ասպիրանտուրայում տվողներին:  
դ) դատական դպրոցի ուսնդիրներին:  
2. Ասպիրանտուրա և մագիստրատուրա ընդու- ճվելու կարգը ու պայմանները հաստատվում են կառավարության որոշմամբ:  
3. Անտեմարտությունը պաշտպանած, բայց ԲՈՂ-ի հաստատված դեռ չստացած և ասպիրանտու- րան ավարտած ու անտեմարտության պաշտ- պանության օրը պաշտպանության ճանաչված անձանց պարտադիր զինվորական ծառայու- թյան զրկակոչվելու կարգը սահմանում է ԳՅ կա- ռավարությունը:  
3. Բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից հեռացված (ազատված) կամ նույն կրթություն մնացած 18 տարին լրացած անձինք կորցնում են կրթությու- նը շարունակելու համար պարտադիր զինվորա- կան ծառայության զրկակոչից տարիներում իրավունքը և ենթակա են զրկակոչի, եթե հեռաց- վելու (ազատվելու) կամ նույն կրթություն մնալու պահանջ նրանք չեն օգտվում սույն օրենքի 13 կամ 15 հոդվածներով նախատեսված ինքնուրու- չից:

պարտադիր զինվորական ծառայության զորա- կոչից տարիներում ստանալու իրավունքից:  
4. Կրթությունը շարունակելու համար պարտա- դիր զինվորական ծառայության զրկակոչից տարիներում ստացած անձինք պարտադիր զին- վորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալով, բացառությամբ պետական պատվերով պետական գիտակրթական համա- կարգի, միջպետական և միջգերտեսչական համամայնագրերով օտարերկրյա պետություն- ների կամ սույն օրենքի 16 հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքում ասպիրանտու- րայում տվողներին, ինչպես նաև դատական դպրոցի ուսնդիրներին, որոնց տարիներում տր- վում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված ան- ձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից քարծր տարիներում, ապա պարտադիր զինվորա- կան ծառայության են կանչվում ասպիրանտու- րան ավարտելուց հաջորդող զորակոչի ընթաց- քում:  
5. Գործարարի զինվորական ծառայու- թյան զրկակոչից առտանալով վիճակի պատճա- րով տարիներում ստանալը  
1. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զրկակոչից տարիե- տան տրվում է 3 անգամ՝ մինչև 1 տարի ժամա- նակով: Երրորդ անգամ տրված տարիներում ժամկետը լրանալուց հետո զորակոչից թշվառ- կան բժշկության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորա- կան ծառայության համար ոչ պիտանի և հաշ- վառվում պահեստագործում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զին- վորական հաշվառումից:  
2. Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանա- կավորապես ոչ պիտանի զորակոչիկներին զո- րակոչից տարիներում տրվում է 1 անգամ՝ 3 տա- րի ժամանակով: Տարիներում ժամկետը լրանա- ցելուց հետո զորակոչից թշվառ կան բժշկության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զին- վորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայու- թյան համար ոչ պիտանի և հաշվառվում պահե- ստագործում, կամ ճանաչվում է զինվորական ծա- ռայության համար ոչ պիտանի և հանվում զին- վորական հաշվառումից:  
3. Բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից հեռացված (ազատված) կամ նույն կրթություն մնացած 18 տարին լրացած անձինք կորցնում են կրթությու- նը շարունակելու համար պարտադիր զինվորա- կան ծառայության զրկակոչից տարիներում իրավունքը և ենթակա են զրկակոչի, եթե հեռաց- վելու (ազատվելու) կամ նույն կրթություն մնալու պահանջ նրանք չեն օգտվում սույն օրենքի 13 կամ 15 հոդվածներով նախատեսված ինքնուրու- չից:

7. Գործարարի զինվորական ծառայության զրկումից ազատվելը  
1. Գործարարի զինվորական ծառայությունից ազատվում է՝  
ա) համրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշ- Վառումից:  
բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հա- րազատ եղբայրը (ըսույրը) զոհվել (մահացել) է ԳՅ պաշտպանության կամ զինված ուժերում է այլ զորքերում ծառայողական պարտավորու- թյունների կատարելու ժամանակ, և նա այդ ըն- տանիքի միակ արու զավակն է:  
գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ:  
դ) զինվորական աստիճան ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտա- կան կամ մանկավարժական գործունեությամբ: Գործարարի զինվորական ծառայության մասին ԳՅ օրենքից հետո ծառայության քերում տարիներում ստանալը  
1. Գործարարի զինվորական ծառայության զր- ակոչից ընտանեկան դրության բերումով տար- րելուում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝ ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ մանուկներով հայր կամ մայր, եթե նրանք չունեն ԳՅ քաղաքացի համարվող աշխատու- ռեն, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:  
բ) առանց մոր մեծացող երեխա,  
գ) երկու և ավելի երեխա,  
դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին,  
ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից քարծր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշ- մանդամ կամ դատարանի վճռով անգործական ճանաչված հարազատ բույր կամ եղբայր, եթե նրա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ հա- մարվող աշխատունակ այլ անձ:  
2. Զորակոչիկին տարիներում տրվում է նաև վերջի- ճիս կմը՝ 2-րդ երեխայով կամ զուգ երեխայով վեցամսյա իրիության դեպքում:

ԳՅ նախագահ Ռ. Քոչարյան Երևան 1998 թ. հոկտեմբերի 14



# ՄԵԾԱԳՈՒՅՆ ԴԱՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԻՇԸ` 8277 ՄԱՐԴ



Նախորդ համարում («Իրավական մշակույթ» 2008 թ. մայիսի 15, թիվ 8) տպագրել էինք Համընդհանուր կոչ համուն կրթության քարոզարշավի աշխարհի մեծագույն դասին մասնակցած կրթական հաստատությունների ու ամհատների մասին տվյալներ: Այս համարում շարունակում ենք ներկայացնել ճշգրտված տվյալները: Ըստ վերջին տվյալների՝ Հայաստանում աշխարհի մեծագույն դասին մասնակցել է 111 ուսումնական հաստատություն կամ 8.277 մարդ՝ հաստատագրելով ազգային մրցանիշի սահմանման իրողությունը:

## Աշակերտական ուղերձներ աշխարհի մեծագույն դասից՝ աշխարհի ղեկավարներին

«Հարգելի՛ ղեկավարներ, բոլոր երկրների երեխաներին անհրաժեշտ է կրթություն, որպեսզի կարողանան ապրել»:

Նազարյան Սաթինե

«Կուգեմ, որ ամբողջ աշխարհում զգալապես գործը լինեն լավ ուսուցիչներ, դարձնեն երեխաներին ստանալով կրթություն»:

Սարգսյան Սուսաննա

«Ես ջանակում եմ, որ երկրագնդի վրա իջնի գիտությունը, և պահանջում եմ, որ աշխարհում լինի իսկապես»:

Ջուլիետա Կիրակոսյան



### ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆ - 2490

Քաղաքամայր Երևանի 26 ուսումնական հաստատություններ են մասնակցել մեծագույն դասին (ընդհանուր թվով՝ 2490 մարդ): Դրանք են՝ Երևանի թիվ 16, 19, 45, 67, 77, 83, 84, 89, 100, 111, 119, 120, 138, 140, 155, 156, 190, 192 դպրոցները, Երևանի «Բյուրակն» կրթահամալիրը և Հայկական բաց համալսարանը:

Երևանի թիվ 137 միջնակարգ դպրոցում դասին մասնակցել է 33 Ազգային ժողովի պատգամավոր Անահիտ Բախչյանը, թիվ 200 դպրոցում՝ Երևանի Մենթեմենի համալսարանի պրոֆեսոր Միլետա Խալափյանը:



Թիվ 189-ում՝ Երևանի Մենթեմենի համալսարանի ռեկտոր Ռուբեն Առուշանյանը, իսկ թիվ 69 դպրոցում կազմակերպված դասին՝ «Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր Տիգրան Նիկողոսյանը, 33 ուսուցիչների անչափահասների գործերով բաժնի պետ, գնդապետ Նելլի Դուրյանը:

### ՍՅՈՒՆԻԷ - 1429

Հայաստանի մարզերից մասնակից կրթական հաստատությունների առավելագույն թվով՝ 25, առաջատարը Սյունիքի մարզն է, որտեղ ընդհանուր թվով 1429 մարդ է մասնակցել աշխարհի մեծագույն դասին:

Ալտիվոլթյուն են ցուցաբերել մի շարք հանրակրթական դպրոցներ քաղաքային և գյուղական համայնքներում, ինչպես օրինակ՝ Սիսիանի թիվ 1, 3, 4, Կապանի թիվ 1, 6, 9, 10, Զաքարյանի թիվ 1 և 2, Գորիսի թիվ 3, Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցները, այդ թվում՝ նաև՝ Խալաթի, Նորաշենի, Տանձապետի, Դավիթ Բեկի, Շուրկի, Գեղանուշի, Կ. Գյոյաբլուրի, Զագեծ-



րի, Օխտարի, Դավրուսի ուսումնական հաստատությունները, իսկ Կապանում կրթության թեմային առնչվող դասեր են անցկացվել Կապանի վարժարանում, թիվ 1 կրթահամալիրում, Կրթության ազգային ինստիտուտի Սյունիքի մասնաճյուղում: Մարզային մասնակցության առավելագույն ցուցանիշներ են արձանագրվել Գորիսի թիվ 3 դպրոցում՝ 249 մարդ, Կապանի թիվ 6 դպրոցում՝ 236 մարդ:

### ԼՈՒԻ - 1086

Լոռու մարզում 12 ուսումնական հաստատություններից մեծագույն դասին մասնակցել է ընդհանուր թվով 1086 մարդ: Առանձնակի ակտիվություն են ցուցաբերել ոչ միայն Վանաձոր, Ալավերդի և Ստեփանավան քաղաքների, այլև մարզի համայնքների կրթական կենտրոնները:



Այսպիսով՝ մարզային մասնակցության տվյալները հետևյալն են. դասին մասնակցել են Վանաձորի թիվ 6, 7, 13 և 23 միջնակարգ դպրոցները, ինչպես նաև Վանաձորի «Բյուրակն» կրթահամալիրը: 13-րդ դպրոցում անցկացված դասին իր մասնակցությունն է բերել քաղաքային Սամվել Վերոյանը: Դասը կազմակերպվել է նաև Ալավերդու թիվ 8 և 12, Ստեփանավանի թիվ 2 և 6, Մարգահովտի և Պուշկինոյի միջնակարգ դպրոցներում:

Մասնակցության լավագույն ցուցանիշները գրանցվել են Վանաձորի թիվ 6՝ 427 մարդ, և Ալավերդու թիվ 12 դպրոցներում՝ 200 մարդ:

### ԿՈՍԱՅԷ - 1075

Կոտայքի մարզում 18 ուսումնական հաստատություններ մեծապես կարևորել են կրթական համակարգում առաջացած լուրջ խնդիրների մասին իրազեկումը: Ընդհանուր առմամբ աշխարհի մեծագույն դասին մասնակցել է 1075 մարդ:

Մեծագույն դասի մրցանիշի սահմանման գործում իրենց ուրույն դերն ունեցան մարզի հետևյալ ուսումնա-



կան հաստատությունները՝ Յրազգանի թիվ 1, 14, Նոր Հաճնի թիվ 2, 4 միջնակարգ դպրոցները, ինչպես նաև Արմավանի թիվ 2, Զարենցավանի թիվ 1, Գառնիի թիվ 1 դպրոցները:

Համայնքային դպրոցներից ապրիլյան դասին մասնակցել են Առինջի, Սևաբերդի, Կանաչուտի, Ջրվեժի, Արամուսի, Գեղաղիի, Ակունքի, Ջրաբերի, Բալահովտի, Արտավազի, Արգականի դպրոցների աշակերտներն ու ուսուցիչները:

Նոր Հաճնի թիվ 2 դպրոցում դասին ներկա է գտնվել քաղաքապետարանի ներկայացուցիչ Սամվել Դանիելյանը, Ակունքում՝ համայնքապետ Դուրյանը, իսկ Բալահովտի դպրոցում՝ համայնքապետ Կ. Գրիգորյանը:

### ՏԱՎՈՒՇ - 562

Տավուշի մարզում աշխարհի մեծագույն դասին տասը ուսումնական հաստատություններից ընդհանուր թվով 562 մարդ է մասնակցել:

Ըստ վավերացման թերթիկների՝ ամենամեծ թվով մասնակիցներ են գրանցվել Բերդավանի դպրոցում՝ 110 մարդ, Բերդի թիվ 3 դպրոցում՝ 100 մարդ: Մասնակից տասը դպրոց-



ներ են՝ Իջևանի թիվ 1 և 5, Նոյեմբերյանի թիվ 1 և 2, Բերդի թիվ 3, Պողոպանի, Բերդավանի, Ենթավանի, Սարիգյուղի, Ծաղկավանի միջնակարգ դպրոցները:

Բերդավանի դպրոցում դասին մասնակցել են մարզպետարանի կրթության վարչության ներկայացուցիչ Գրիշա Մարալյանը և համայնքապետ Արտաշես Ռևազյանը:

### ՄԱՐՄՍ - 1003

Աշխարհի մեծագույն դասին մասնակցել է 1003 մարդ՝ 11 ուսումնական հաստատություններից: 270 և 260 մարդ է իր մասնակցությունը բերել համապատասխանաբար Վերու թիվ 2 և Ոսկետափի թիվ 2 դպրոցներում: Մարզի քաղաքներում և համայնքներում մյուս կրթական հաստատություններից աշխարհի մեծագույն դա-



սի միասնական թեմայի շուրջ քննարկումներ են ծավալվել նաև Արարատի թիվ 2, 3, Արտաշատի թիվ 5, Այրբապի թիվ 2, այդ թվում նաև՝ Լանջազատի, Արալեզի, Գոռավանի, Հայամնիտի, Բաղրամյանի դպրոցներում:

# ՄՇԱԿՈՒՅՑ

«Առավոտ» օրաթերթի 2008 թ. ապրիլի 19-ի համարում տպագրվել է հարցազրույց առաջիկայում տպագրության պատրաստվող X-WISH ժամանցային ամսագրի գլխավոր խմբագիր Պետրոս Ասատրյանի հետ: Հարցազրույցի բեման փոխարինական ամսագրի հիսկական տարբերակի ստեղծումն ու հայ կանանց մերկանդան նկարներն ամսագրում գեղեղեն է: Այդ հրապարակումի կապակցությամբ իրենց խոսքն են «Իրավական մշակույթ»-ի խմբագրություն ուղարկել բանասերներ Լևոն Սարգսյանն ու Դավիթ Գյուլզարյանը:

## ԻՆՔՆԱՄԵՐԿԱՅՈՒՄ

(Մի հրապարակման առիթով)

Հավանոր խոսք է՝ առավոտ կբացվի, բարին է՝ հետը: Բայց այդպես միշտ չի լինում, որովհետև երբեմն «Առավոտը» բացվում է, անբարին ու անբարոն է՝ հետը: Եվ ականա մտաբերում են երկու-երեք տարի առաջ այս օրաթերթում տպագրված մի ուրիշ ցույթ՝ «Կույս լինելն այնևս մտա չէ» վերնագրով: Հեղինակը՝ լրագրող հայտնի, սեփական «հետադուրություններով» եկել էր այդպիսի եզրակացության և այնքան վստահ էր իր անսխալականությանը, որ այդ համոզումը վերնագիր էր դարձրել: Ենթադրություն կար նաև մտայնություն, թե կուտություն այնևս հայ երիտասարդության առաջընթացին խանգարող բարոյական մնացուկ է՝ քանահրաքնի արժանի:

Չարմանալի է. արևմտյան բարոյական «արժեքների» հանդեպ հինգվածի մեր կենցաղային տասնամյակներ շարունակ չի փոխվում, արևմտյան մշակութային բերածոների ստրկական պատճենումը հայ իրավունության մեջ տեսակվող շարունակվում է: Եվ ինչ ասես չենք կասկածում՝ անարվեստ սերնի ու հեռուստաշոյն, ամառակաթար Ֆիլմ ու տեսահոլովակ, ստորակարգ երգ ու երաժշտություն, նորածնություն ու անասիրտ: Առավել վերջինը՝ «X-WISH», որի հիմնադիր-գլխավոր խմբագիր ոմն Պետրոս Ասատրյանի հետ հարցազրույց է տպագրվել «Առավոտ» օրաթերթում (19 ապրիլի 2008): Հարցազրույց վարել է Ա. Դանիելյանը, ով սովորաբար մշակութային նյութեր է հեղինակում, և այս դեպքում էլ ակնհայտ է զիզը՝ զույգի բեման մտցնել մշակութային դաշտ՝ ցամախով այդպես աստիճանել նյութի արվեստականությունը և, նույնիսկ, «բարձրաշխարհայինությունը»:

«X-WISH»-ը (վերոնշյալ խմբագրի քաղաքականությանը՝ գաղտնի ցանկություն) հայկական պատճենն է միջազգային «Playboy»-ի, որն աշխարհին հայտնի է երոտիկ բովանդակությամբ, մերկ լուսանկարներով, հերոսներին սեռական կյանքի հայտնի է և ամուսյա մանրամասներով: Մեր «X-WISH»-ը, սակայն, «ազգային» դիմագիծ ունի և յուրօրինակ է. այստեղ հայտնվում են միայն համրահայտ հայուհիները, նրանց մերկ կամ կիսամերկ լուսանկարները լինելով՝ «ամսկերտ», յուրաքանչյուր համարում ենրկայանալու, մերոտություն՝ մերկանալու են ընդամենը 3-ը, վերջապես՝ լուսանկարները լինելով են «արվեստի գործեր»։ այդպես որոշված է:

Եվ քանի որ իսկական արվեստն օժտված է արժեքության մեծ ուժով, հոգևորտ հայ խմբագիրը կամիմալ իրացրել է հնարավոր վստա հետևանքների մասին. ամսագիրը կրավանդներում է գրախառնություն կիսատմի

«հոլորգաֆիկ փակնով», և անչափահաս այնտեղ «մուտք չի ունենա»: Չարմանալի է, չէ՛, լինել այսքան (նշանավոր հայուհիներին «մերկացնելու չափ») ձեռներեք-փորձառու և, միաժամանակ, այսքան միամիտ՝ կարծելու համար, թե ժամանակակից սերունդը նրազույց տեխնոլոգիաներից հեռու է այնքան, որ հնարավոր է ինչ-որ փակնով անասգիրը նրանց համար փակ պահել: Մեր խմբագիրը, ավել, աչքի չի ընկնում նաև հետևողականությանը. հավաստելով, թե մերկ և կիսամերկ կանանց լուսանկարները իր ամսագրում կհայտնվեն իբրև «արվեստի գործեր», նա, մեղմ ասած, ինքն իրեն հավատում է: Մի պահ հավատանք, թե անվարկեշտ մերկությունն ու ներքնաշողը կարող են մատուցել իբրև «արվեստի գործ», բայց նաև տարակուսե՛ք՝ էլ ի՛նչ իմաստ ունի այդ «արվեստի գործը» թաքցնել անչափահասից՝ փոխանակ դրանով նրան դաստիարակելու: Մանավանդ որ ամսագրի «հիմնական խնդիրն է Հայաստանում սեռական կուլտուրայի բարձրացումը»:

Հարցազրույցում, որ ակնհայտորեն զավագի նպատակ ունի, փակ պահել է մատուցված անոթխած՝ հայուհու ավանդակներ կերպարին. մեր կանանց, խմբագրի արտահայտությամբ, «խնդիր չունեն» հանրությանը մերկ ներկայանալու, բայց... պայման ունեն՝ ներկայանալ «աչքերի մասը փակ»: Կա նաև երկրորդ պայմանը. պարզում է ոչ ոք չի ուզում ամսագրի առաջին համարում լինել, բայց դեմ է հայտնվել երկրորդում. այս դեպքում կարծես նույնիսկ հեղոր խնդիր կա: Հարցազրույցում, բնականաբար, մի երկու խոսք է ասված՝ «բավարարելու հայ տղամարդու ինքնասիրությունը, տղամարդու («երգչուհու ընկեր, նշանած, ընտանիքի անդամ»), որ «ֆոտոսեսանսի ժամանակ ներխուժում է տարակարծիքը՝ թույլ չտալով լուսանկարվել»: Բայց մեր խմբագիրը ակնհայտորեն ճարպիկ տղա է՝ կարողանում է ոչ միայն համոզել, այլև, ինչպես ասվեք, թե կուզ և հաջող համարներում մերկ ներկայանալու համար հերթ գոյացնել:

Սերբագրի հավատամքը՝ ամսագրում մերկանալու են միայն «չորու-քիզները կիսան կանանց, երգչուհիներ, մոդելներ»: Թվում է՝ արտառոց և, մասնավոր, վրանգակող ոչինչ չկա. հայտնի հայ կանայք հնարավորություն կունենան հանրությանը հայտնիանալու նաև ֆիզիկական մերկությամբ, ինչ կա որ: Բայց, ինչպես ասում են, պարանք երկու ծայր ունի: Չեմ կասկածում, այլև համոզված եմ՝ հազարավոր հայ պարմամուկներ զայթաղություն կունենան հենց մերկանալով սկսել երգչուհի, մոդել, հանրահայտ կին դառնալու իրենց երազանքի իրականացու-

մը: Եվ շատ մեծ խելք պետք չէ՝ կուսնելու համար, որ ամսագիրը շուտով դառնալու է մի յուրօրինակ «մերկի թատրոն», որտեղից կորդարվեն հայ նորոյա «աստղերը»: «Մերկի թատրոնի» այս հեռանկարը խիստ իրական է, քանզի Պ. Ասատրյանը, չքավա կանանալով ամսագրով, «TV-ներից մեկի հետ բանակցություններ է վարում՝ հեռուստահաղորդում բացելու շուրջ»...

